

Բ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄՎԱԾ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԻ ԻԶԵՑՄԱՆ ՀԵՏ

Զնայած Սևանի ավազանի ֆլորային և բուսականությանը նվիրված են մի շաբք ֆլորիստիկական և գեորգուսանիկական աշխատություններ (2, 3, 6, 7), սուկայն ներկայումս կարիք է զգացգում այդտեղ տանել ստացիոնար էկոլոգիական հետազոտություններ, հատկապես անհրաժեշտ է ուսումնասիրել այն փոփոխությունները բուսականության մեջ, որոնք կապված են Սևանա լճի ջրի իջեցման հետ:

Սևանա լճում գարերի ընթացքում կուտակված ջրի հոկայական պաշարը երկար տարիներ հանդիսացել է մի շաբք հետազոտողների ուշագրության առարկա ինչպես էլեկտրական էներգիա ստանալու, այնպես էլ ցածրագիր շրջանների անջրդի հողերի սոռոգման համար:

Այս երկու հիմնական խնդիրների լուծման համար ծաղել է Սևանի պրոբլեմը, որն իր գործնական լուծումն ստանում է միայն այժմ, Սովետական իշխանության օրով:

Սևանի պրոբլեմի իրականացման կապակցությամբ նախատեսված է լճի մակերեսությը 1932 թվականի համեմատությամբ իջեցնել մինչև 50—60 մետրով, որի հետևանքով, ըստ Կիրենի և Լյատտիի (4, 5) հաշվությունների, կազմավոր մոտ 118—120 հազար հեկտար տարածություն: Այս տարածությունների իրացման հետևանքով խոշոր չափով կավելանա չայստանում մշակվող հողերի տարածությունը:

Արդեն 17 տարի է, ինչ լճից ջուր է բաց թողնվում, և նախնական ավյաններով ջրից արդեն ազատվել է մոտ 2000—2500 հեկտար տարածություն: Ջրից ազատված այդ տարածության վրա տեղադրել արդեն աճել է փարթամ բուսականություն (Ձորագյուղի գիմաց, Աղիամանի գետաբերանում և այլ տեղերում): Ազատված տարածությունների բուսական ծածկույթի ձևավորման և աստիճանական փոփոխման պրոցեսների ուսումնասիրությունը ինչպես տեսական, այնպես էլ գործնական խոշոր նշանակություն ունի:

Տեսականորեն այդ թեման կարեւոր է նրանով, որ հնարավորություն է աալիս հետազոտելու բաց փիտոցենոզները փակ փիտոցենոզների վերածվելու հաջորդական ստագիանները, ուսումնասիրելու այն մարգագետնային, տափաստանային և այլ տիպի փիտոցենոզների գենեզիսը, որոնցով ներկայումս ծածկված են լճի ափերը:

Գործնական տեսակետից թեման այն կարեւորությունն ունի, որ հնարավորություն է տալիս կանխազուշակելու, թե հետազում ինչպիսի փիտոցենոզներ կառաջանան ջրից ազատվող տարածությունների վրա—դա իր

հերթին հնարավորություն կտա պլանավորելու ազատվող տարածություն ների աստիճանական իրացումը ժողովրդական անտեսության մեջ:

Ներկայումս արդեն ջրից ազատված տարածությունները, որոնք սկըսում են ապրել ցամաքային կյանքով, միանգամայն յուրահատուկ են թե հողերի և թե բուսական ծածկութիւն տևակետից և պահանջում են չափազանց մանրամասն, ուշադիր ուսումնասիրություն: Ջրից ազատված տարածություններում սկսվում են հողագոյացման պրոցեսներ և մենք ակտնատես ենք լինում ցամաքային բուսականության երևան դաշտուն ու նրա հայնական զարդացմանը:

Դիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում բուսական խմբերի փոփոխումը ջրից ազատված զանազան հողատիպերի փոփոխումն կապակցությամբ:

Այսական մեծ հետաքրքրությունը ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի տեսության կարելի է դիմել հողառաջացման պրիմիտիվ պրոցեսներից մինչև ճիշտակալման տարրեր սաշդիաները:

Ուսումնասիրությունը մենք սկսեցինք 1946 թ. ամառվանից, ընդունելով հողավագայությունը և օգսատոս ամիսները: Աշխատանքները շարունակվեցին նույն 1947 ու 1948 թվականներին: Բայց որում ուսումնասիրությունը կատարվեց երկու ժամանակաշրջանում՝ ամռան սկզբին, հունիսի մինչև հուլիսի կեսերը (պետք է նկատի ունենալ, որ Սևանի ավագանում զարունը ուշ է բացվում), և օգսատոսից մինչև սեպտեմբերի սկզբները:

Ստացիոնար ուսումնասիրությունները կատարվում են գլխավորապես լճի հյուսիս-արևմտյան մասում, ընդգրկելով Զարլովիայի (Ալեքսանդրովիա), Լաշենի (Օբղավլու) շրջակայքը (Սևանի շրջան) և լճի արևմտյան մասում, նորագույղի և Զորագյաղի-շրջակայքը (Նոր-Բայազետի և Մարտաւու, շրջան): Այդ վայրերի ընտրության ժամանակ մենք հաշվի ենք առել տարրեր տեսակի գրանցները և երկրորդը այն, որ այդող ջրից ազատված տարածություններն իրենց բուսածածկույթով ավելի մեծ մասնիկ են ներկայացնում և ավելի հարմար են ստացիոնար ուսումնասիրությունների համար:

Հետազոտած թյան սկզբում մենք առափնյա դստին բաժանեցինք շերտերի և ենթադրութիների, հաշվի առնելով բուսական ծածկույթը և հողերի տեսակները: Այսուհետեւ կազմեցինք յուրաքանչյուր ենթադրություն աճող տեսակների լրիվ ցուցակ, յուրաքանչյուր ենթադրություն առանձնացրինք փորձնական հրապարակներ, 19×10 մետր տարածությում, տալով զբանց ֆիտոցինուսդիական նկարագիրը: Տարրեր բուսական խմբավորությունների ֆիտոցինուսդիական նկարագիրը տալիս նկատի ենք ունեցել հետեւյալ երեք զվարար հատկանիշները 1) յուրաքանչյուր տեսակի առառությունը, 2) յարաւականությունը և 3) ֆենոլոգիական ֆազան: հաշվի ենք առել նաև տեղի ռելիքտը, թեքության աստիճանը և մակերեսույթի բնույթը:

Բացի զբանից, նկարագրել ենք 5 պլաֆիլ լճի այժմյան ափից մինչև հին ափը ընկած ամբողջ դուռը լայնությամբ: Տարածությունները փիքսացիր են ենթարկվել բուսական ծածկույթի փոփոխություններին համապատասխան: Յուրաքանչյուր հատվածում կազմվել է փիտոցինուսդիական նկարագրություն վերեւում նշված ձևով, ինչպես նաև սբուզվել է մակերեսույթի թեքության աստիճանը անկյունաչափի օգնությամբ:

Բոլոր ենթադրաբներից մենք հավաքել ենք հերբարիում, նաև հավաքվել է մի առանձին հերբարիում յուրաքանչյուր ֆիւսիցինուրզիական նկարողի վերաբերյալ հետազյում ինչպես ծաղկող, այնպես էլ չծաղկող բույր բույսերը ճշգրիտ սրացելով համար:

Հետազոտությունների ընթացքում վերցրել ենք հողային շատ նմուշներ, որոնք բնութագրում են հողագոյացման պրոցեսի ընթացքը:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բուսականությունը ջրեց աղատված տերիսորիաներում տարրեր է, և կախված է լճի ափերի գիրքից: Թեքությունից ու ուրսորդատից: Եվ դա շատ բնական է, քանի որ լիճը իր մակընթացաթյան և տեղատվաթյան ժամանակ հարթ ափնորում կուտակում է մեծ քանակությամբ տիղմ, ափաղ, մանր խիճ, խիկ թեք և քարքարոս ափերը զուրկ են նման զոյացումներից: Համաձայն զրան մեր նկարագրած պրոֆիլները ըստ բուսականության կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) թեք և քարքարոս, որտեղ դժվարվոր է դիմքիկատորները հանդիսանում են մեղոքանորություն բույսերը. բ) հարթ և խոնավ, որոնք հետզիտե անցնում են մեղոքիտ մարգագետինների:

Հարթ և խոնավ պրոֆիլներն իրենց հերթին ըստ բուսականության կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբն են կազմում փակ լճախորշերը, որտեղ ափերը խաղաղ են, ալեկոծաթյունից պաշտպանված, հետեւաբը, ջրային բուսականությունն էլ ենթակա չէ լճի ալիքների հարցածներին: Այդաեղ առաջանում են ջրային բույսերը: Իրեւ օրինակ կարսղ է ծառայել Զկալովկայի ու Նորաշենի միջև զանվող փակ լճախորշը: Մյուս խմբին պատկանող ափերը ենթակա են մակընթացության և տեղատվաթյան ներդրությանը, իսկ այդպիսի պայմաններում ջրային բուսականություն չի կարսղ առաջանալ: Օրինակ կարսղ են ծառայել Մարտունու շրջանում Զորադյուղ բնակավայրից դեպի արեկլք ընկած ափերը:

Առաջին խմբի մեջ մանող ամենաքարքարոս ու չար ափերից մենք իրեւ փարձնական տեղամասեր վերցրել ենք Սևանի և Յամաքարեզդի միջև զանվող տարածությունը, լճի հյուսիս-արևմայան մասում՝ Զկալովկայի ու Լճաշենի միջև զանվող վերջին լճախորշի շուրջը, որն ընկնում է լճի հյուսիս-արևմայան ափին և Սևան ավանից ոչ հեռու. (մոտ 300 մետր) նոր բացված կղզու տերիտորիան: Այդ ափերում պրոֆիլի թեքությունը կազմում է 1-ից 12°, սուբսորդաց ներկայացնում է ցեմենտացած քարեր, որոնք հարուստ են CaCO₃-ով: Այս ապաների վրա տեղական գույք են ցցված կիսանդրկված խճաքարեր 30—40 ոմ տրամադրով, և մանրախիճ՝ խոշոր ավագի հետ խառը: Ափից դեպի ցամաք գնալով ցեմենտացած քարերն աստիճանաբար վերջանում են և աեղի են տալիս խճաքարերի և կարծը ու չար գետնի: Քարերի վրայի սպիտակ շերտը աստիճանաբար վերանում է, որից հետո հանդիպում ենք խճաքագի, նզկված խիճերի՝ խառն չողի հետ: Ցեղ-տեղ առանձին հատվածները բարձրավիճ գուրկ են հողից, իսկ որոշ պրոֆիլներում, ինչպիս օրինակ նոր բացված կղզու վրա, ուրեսորդաց ներկայացնում է բացաքանակազի ցմենտացած բաղալա, բոլորովին զուրկ հողային շերտից, որտեղ ամբողջ տեղամասը ծածկված է փափկամբների լացիների մնացորդներով: Հիշյալ պրոֆիլներում բուսական ծածկույթը կազմում է մոտ 25 տոկոս Այտեղ էղիքիկատորներն են հանդիսանում՝ Achillea micrantha, Achillea setacea, Artemisia Absinthium,

Artemisia austriaca, *Cirsium echinus*, *Pyrethrum Szovitsii*, *Festuca ovina*, *Bromus squarrosus*, *Stachys atherocalyx*, *Thymus Kotschianus*, *Helichrysum glandulosum*, *Sideritis montana*, *Bromus tectorum* և այլն:

Ն 1 պրոֆիլի (*Սևանի և Ցամաքաբերդի միջեւ*) մեխանիկական անալիզը ցույց է տվել հետեւյալ պատկերը: Հողի 10 մմ տրամագծով հատիկները կազմում են 33,32⁰/₀, 3—10 մմ տրամագծով՝ 12,1⁰/₀, 1—3 մմ տրամագծով՝ 14,25⁰/₀, և 1 մմ-ից պակաս տրամագծով՝ 40,50⁰/₀: Միջին *Rhizopeltis* կազմում է 7,08: Այս հողերը *CaCO₃*-պարունակում են շատ քիչ՝ 2,6⁰/₀:

Այդ տիպի հողամասեր մենք հանդիպում ենք նաև Մուխանի և Աղղիքիրի շրջակայքում:

Երկրորդ խմբի համար որպես փորձնական հրապարակներ վերցրել ենք լճի հյուսիս-արևմտյան մասում Չկալովկայից ղեղի Նորաշեն տանող ճանապարհի ձախ կողմում ընկած փակ լճախորդը և լճի արևմտյան ափին՝ Զորագյուղի ղեմաց ընկած հրապարակը:

Այս երկու հրապարակներում պրոֆիլների թեքությունը կազմում է 5—8⁰, բուսական ծածկույթը՝ մոտավորապես 96—100⁰/₀, հողի բնույթը տորֆաճահճային է, ավաղի հետ խառը:

Դրված է 20 փորձնական հրապարակ 450 մետր երկարությամբ, հաշվելով լճի այժմյան ափից մինչև հին ափը: Մեխանիկական անալիզը ցույց է տվել որ այստեղ մակերեսային հողաշերտի մանր հատիկները 1 մմ-ից պակաս կազմում են 10⁰/₀, իսկ *CaCO₃*-ը՝ 7,5⁰/₀: Հողաշերտը շատ հարուստ է բուսական մնացորդներով:

Զկալովկայի ու Նորաշենի միջև ընկած փակ լճախորդում, որանուական աղղիկության աղղեցությունը համեմատաբար թույլ է, ափերը խաղաղ են և ջրի խորությունն ավելի պակաս է, զարգանաւում են մի քանի ջրային բույսեր, ինչպես օրինակ, կանաչ թելանման ջրիմուռներ, *Myriophyllum* և հատկապես *Lemna trisulca*, որն այստեղ գերիշում է (80⁰/₀) 4—5 բալ առատությամբ, ամրացած է հատակում գտնվող տիղմերին ու քարերին և մասամբ էլ լողում է ջրի երեսին:

Ջրից դուրս, մոտ 10 մետր լայնության վրա, 10—15 մ հաստությամբ սուրստրատը կազմում է *Lemna*-ի մնացորդների փուխոր նստավածք, համարյա սպիտակ գույնի:

Զսրագյուղի ղեմաց ընկած պրոֆիլում, չնայած մակերեսութիւնի փոքր թեքությանը (5—8⁰), ջրի մեջ և առափնյա մասերում մինչև մեղոփիտ մարգաղետինները չկա ջրային բուսականություն, որի պատճառը, ըստ երկությին, ուժեղ ալեկոծությունն է:

Այստեղ հողը հարուստ է օրգանական նյութերի մնացորդներով, հատկապես վերին շերտերում, և ավաղով: Մակերեսային շերտի մեխանիկական անալիզը ցույց տվեց, որ հողը բաղկացած է մանր հատիկներից, 3—10 մմ տրամագծով՝ 12,3⁰/₀ և 1 մմ պակաս տրամագծով՝ 83,7⁰/₀, չքայքայված բուսական մնացորդներ՝ 3,65⁰/₀:

Այս երկու պրոֆիլներում ջրային բույսերից էղիֆիկատորներ են հանդիսանում—ջրի մոտ *Lemna trisulca*, *Myriophyllum spicatum*, *Utricularia vulgaris*, *Butomus umbellatus*, *Sparganium polyedrum*, *Phragmites communis*, *Schoenoplectus tabernemontani*, *Heleocharis eupalustris*, *Puc-*

cinellia sevangensis, Bidens cernuus, Triglochin palustris, Triglochin maritima. Իսկ զրից ազատված ցամաքային անդերաւմ տարածված են Trifolium repens, Trifolium pratense, Trifolium neglecta, Calamagrostis epigeos, Agrostis tenuis, Bromus commutatus, Koeleria caucasica, Linaria grandiflora, Vicia persica, Medicago sativa, Cleome ornithopodioides, Lotus caucasicus, Equisetum ramosissimum, Ranunculus sceleratus և այլն:

Մեր ուսումնասիրած պրոֆիլների մեջ բուրպովին տարբեր տեղ է դրավում Նորագուղի հրվանդանի պրոֆիլը: Այսահեղ զրից ազատված շերտի լայնությունը կազմում է մոտավորապես 550 մետր: Դրված է 14 փորձնական հրապարակ: Հողի մեջ գերիշխում են մանրանզի հատիկներ՝ 1 մմ-ից պակաս տրամագծավ: Ph-ի միջինը կազմում է 8: Հողը ունի արտահայտված կարբոնատայնություն: Վայրի թեքությունը 2° է, բուսական ծածկութիւնը խոսությունը 20—30%: Սուրսարաւը հարուստ է ավագային հաստ շերտով, որը երբեմն ընդհատվում է խիճների կամ փուխր քարերի կուտակումներով: Ավագները շրջապատի լեռնային տեռակների հազմանարման պրոգրամաներ են, որոնք հետագայում ջրերի միջացով կուտակվել են ոելեփի ցածրազիր մասերում և առափնյա շրջաններում: այսահեղ է զիփիկասորներ են հանդիսանում Cleome ornithopodioides, Bromus tectorum, Centaurea squarrosa, Achillea micrantha, Euphorbia sequieriana և այլն:

Լից 73—550 մետրի վրա տարածված են փուխր, մոխրագույն, չափազանց չոր տղմային հողեր, բոլսրավին զուրկ քարերից: Այսահեղ է զիփիկատարներ են հանդիսանում—Glaucoma officinale, Camphorosma Lessingii, Salsola ruthenica, Aeluropus littoralis, Kochia prostrata և այլն:

Ափից զեղի ցամաք գնալով, պրոֆիլները փոփոխվում են նույնպես ըստ ոելեփի և ըստ սուրսարաւի: Ցամաքարերդի մոտ, ինչպես Զկալովկայի վերջին ծոցի մոտ գտնված հողամասերը, զեղի խոր ցամաք գնալով ընդդրկում են իրենց մեջ լեռնատափաստանային բուսականություն, որտեղ տիբապետող բույսեր են հանդիսանում Thymus Kotschyanus, Dianthus crinitus, Stipa capillata, Bromus scoparius, Festuca ovina, Artemisia austriaca, Astrodaucus orientalis, Pyrethrum punctatum, Papaver fugax և այլն:

Այսահեղ վայրն ունի մինչև 250 թեքություն, իսկ սուրսարաւը կազմում է շատ ամուր գրունտ, որի մակերեսույթը ծածկված է 40—50% մանր խիճներով:

Զկալովկայի ու Նորաշենի միջև և Զորագյուղի զիմացի ափերում ընկած պրոֆիլները վերջանում են լեռնամարգագետնային բուսականությամբ, որտեղ գերիշխում են Trifolium pratense, Trifolium repens, Calamagrostis epigeos, Agrostis tenuis, Bromus commutatus, Epilobium hirsutum, Medicago sativa, Lotus caucasicus, Cirsium Szovitsii, Origanum vulgare, Papaver orientale, Festuca pratensis, Alopecurus ventricosus և այլն:

Առափնյա բույսերից մինչև լեռնա-տափաստանային և լեռնա-մարգագետնային խմբավորումներ կազմվելը մենք հանդիպում ենք բազմաթիվ

անցողիկ բուսական խմբավորությունների, որոնք չունեն պարզ արտահայտված էղիֆիկատորներ:

Եթե բոլոր պրոֆիլների բույսերի տեսակները դասավորենք ըստ լմի ափից նրանց ունեցած հեռավորության, ապա կոտանանք էկոլոգիական շարք ըստ պակասող խօնավորթյան. այդ շարքի առաջին խումբն ընդգրեթակում է հիդրոփիլ բուսականությունն, երկրորդ խումբը՝ հիգրոփիտ բուսականությունն, երրորդ խումբը՝ մեզոփիտ-մարգագենային բուսականությունն և չորրորդ խումբը՝ մեզոֆիսերոփիտային բուսականությունն:

Բուսականության ուսումնասիրությունը մեզ բերում է հետեւյալ օրինաչափություններին.

ա) վերջին տարիների ընթացքում կատարված դիտողությունները ցույց են տալիս, որ ֆիտոցենոզների կազմը զանազան տեղերում խիստ տարբեր է, կախված է գրանտի կազմից, որովհետև ավազոտ և քարքարոս հողերում սովորաբար բնակություն են հաստատում տարբեր բույսեր—*Papaver fugax*, *Papaver floribundum*, *Fumaria Schleicheri Cleome ornithopodioides* և այլն.

բ) Փիտոցենոզների կազմը գենես չի կայունացած: Մենք այդտեղ ակնհում ենք բազմաթիվ տեսակների, իսկ բուսականությունը ժամանակի ընթացքում խտանում է: Որպես օրինակ կարելի է բերել № 1 պրոֆիլի № 2 հողամասը (*Ցամաքարերդ*): Այս հողամասում բուսական ծածկույթը եղել է 1947 թ. 70%՝ իսկ 1948 թ. օգոստոսին արգեն 80—85%, հողամասը գանգում է լից 108 մետր հեռականության վրա: Բուսականությունը ներկայացնում է հետեւյալ պատկերը. (տես էջ 69):

Ֆիտոցենոզիկական նշումները կատարում ենք հետեւյալ կերպ:

1. Առատությանը նշում ենք 1—5 թվանշանավ, ըստ որում 1-ը համապատասխանում է ամենափոքր քանակության, իսկ 5-ը՝ ամենամեծ:

2. Յարուսականությունը.

I—յարսւս 40 սմ-ից բարձր

II— 20—40 սմ

III— մինչև 20 սմ

3. Բույսի զարգացման ֆազաները բերում ենք հետեւյալ պայմանական նշաններով՝

▽—ծաղիկը բուտոնով

×—բույսը լրիվ ծաղկած

~—ծաղկաթափում

○—պտղակալում

□—հասկակալում (ցորենաղղիների մոտ)

Մեր ուսումնասիրած պրոֆիլների մեջ միայն Մարտունու շրջանի շորպէյուղ բնակալայրի դիմաց և Զկալովկայի ու Նորաշենի միջև ընկած հողամասները առաջացրել են 90—100% խոտությամբ ֆիտոցենոզ, որի կազմի մեջ գերեզմանում են լորազիներից՝ *Trifolium repens*, *Trifolium pratense*, *Medicago neglectum*, *Medicago coerulea*, *Medicago lupulina*, *Lotus caucasicus*, *Melilotus officinalis*, ցորենաղղիներից՝ *Calamagrostis epigeios*, *Festuca ovina*, *Agrostis tenuis* և այլն:

Պրոֆիլ № 1. Հազարամ և 2^ր. Սեմնից դեպի
Ճամաքարեն, Բաւարտանկան այգու դիմաց
Փորձ Ն 1, սահմանը դեպի Հյուսիս

4—VII—1948

Պրոֆիլի ուղղությունը՝ հարավից հյուսիս
Направление профиля Ю-С.

Փորձ Ն 1. սահմանը դեպի Հյուսիս
դեպի Ճամաքարեն, Բաւարտանկան այգու դիմաց
դեպի Հյուսիս

Ըն. № 1

Համար. ճակար (մ-ով) Պատշաճություն առաջանալու վայրի հեռավունքը մետրում	Բնակչությունը (0-ը ակնությանը համապնդէլու առաջանալու վայրի հեռավունքը մետրում)	Բարձրությունը (մ-ով) Առաջանալու վայրի բարձրությունը մետրում	Բույսերի տեսունը Նазвания растений			
			Ուսումնական գործությունը (0-ը ակնությանը համապնդէլու առաջանալու վայրի հեռավունքը մետրում)	Ուսումնական գործությունը (0-ը ակնությանը համապնդէլու առաջանալու վայրի հեռավունքը մետրում)	Ուսումնական գործությունը (0-ը ակնությանը համապնդէլու առաջանալու վայրի հեռավունքը մետրում)	Ֆեոնոլոգիական դաշտ
108 13	Մանր շտկանակազույն խիճ, ըոլորովին դուրկ կրամին շերտից	70	Achillea micrantha MB. Artemisia Absinthium L. Mellilotus officinalis (L.) Desr. Convolvulus lineatus L. Cirsium incanum Fisch. Nepeta transcaucasica A. Gr. Dactylis glomerata L. Silene iberica MB. Pyrethrum Szovitsii (C. Koch) D. Sosn. Juncea glaucia Ehrh. Phleum pratense L. Polygonum patulum MB. Astrodaucus orientalis (M.B.) Drude Onosma microspermum Stev. Campanula rapunculoides L. Fumaria Schleicheri Soy.-Will. Bromus Danthoniae Trin. Thymus Koischenianus Boiss. et Hoh. Eryngium nigromontanum Boiss. et Buhse Centaurea squallosa Cirsium Szovitsii (C. Koch) Boiss.	4 3 3 2 1	I I II III I I I II II I III I II I V V D D ~ D D D D D D D D I	Х Х

Պրոֆիլ № 5, հողամաս № 6
Մարտունու շրջ. Զորագյուղի տփերը
Փորձագույն
Профиль № 5, участок № 6
Мартуни—Дзорагюх

13—VIII 1948

Պրոֆիլ ուղղությունը՝ տրիմուտրից տրիմեր
Направление профиля З—В

Сп. № 2

Հասկածություն (մ-մ)	Расстояние от берега в метрах	Գրունտ Ծառաթափանական պուրակ (0°)	Համարված մակարդ պուրակ (0°նիութ)	Սահմանադրամ պուրակ (0°նիութ) Покрытие растениями в %/%	Բույսերի անունը Названия растений			Ֆիտոպենոլոգիա- կան նշաններ Фитоценологич. запись	
					Անառաջան օճառը	Ենթակա- նություն Ярусность	Ֆանգու- թափանական ֆենոլոգич. фаза		
240	13	Օբղանական նյութերով հարուստ տվազ	100		Trifolium repens L. Trifolium pratense L. Trifolium neglectum F.M.L. Bidens cernuus L. Schoenoplectus tabernemontani (Gmel) Palla Poa persica Trin. Juncus lampocarpus Ehrh. Cirsium esculentum C.A.M. Myosotis propingua F. et M. Ranunculus caucasicus M. B. Epilobium nervosum Boiss, et Buhse Heleocharis eupalustris Lindl. Centaurium pulchellum (Sw.) Druce Centaurium Meyeri (Bge) Grossh. Juncus glaucus Ehrh. Cyperus sp. Lotus caucasicus Kupr. Melilotus officinalis (L.) Desr.	3 3 3 3 2 1 2 2 1 1 1 1 1 1 1 1 1 1 1	II II II III I II I III II III I III I III II III II	D ○ V ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ ○ X X X X X X X X X X X X X X X X	

<i>Alopecurus vaginatus</i> Pall.	1	I	D
<i>Medicago coerulea</i> Less.	1	II	~○
<i>Plantago major</i> L.	1	I	○
<i>Lithospermum arvense</i> L.	1	I	○
<i>Agrostis tenuis</i> Sibth. et Sm.	3	I	D
<i>Bromus commutatus</i> Schrad.	1	I	D
<i>Koeleria caucasica</i> (Trin.) Dom.	1	I	D
<i>Linaria grandiflora</i> Dsf.	1	II	✗
<i>Vicia persica</i> Boiss.	1	I	✗
<i>Dianthus crinitus</i> Sm.	1	II	○
<i>Allium albidum</i> Fisch.	1	III	~○
<i>Medicago sativa</i> L.	1	II	~
<i>Salvia verticillata</i> L.	1	II	○
<i>Trifolium trichocephalum</i> M. B.	1	I	✗
<i>Carex divisa</i> Huds.	1	II	○
<i>Trifolium spadiceum</i> L.	1	III	✗
<i>Senecio coronopifolius</i> Dsf.	1	II	~○
<i>Equisetum ramosissimum</i> Dsf.	1	II	○

Գրաւնաը Զկալովկայում կիսաավազային է, տորֆաճանճային. Ծից 60—110 մետրի վրա տաքածված է հարսոս տորֆային շերտը, հատկապես եղեգնի բուսական մնացորդներով, որտեղ հողի 5—8 մմ խորությամբ շերտը իրենից ներկայացնում է բացառապես բույսերի նույրը արժանակի թաղիք, զուրկ հողի մասնիկներից: Տորֆի շերտի հաստությունը հասնում է 50 մմ-ի:

Ազատված ավազային գրանաները հաբուսամ են չքայքայված բուսական մնացորդներով: Թեքությունը շատ փոքր է՝ 5—8%:

Այսպիսի հողերի օրինակ կարող է հանդիպանալ Յարատունու շրջանի Զորագյուղի գիմաց ընկած նոր բացված տերիտորիայի: Այս հողամասը, որը գտնվում է լճից 240 մետր հեռավորության վրա և ներկայացնում է հետեւյալ պատկերը (տես էջ 70):

Գետք է ասել, որ ցորենազդի և լորազդի բույսեր մյուս փիտոցենոգների մեջ քիչ են: Անդամ փակ փիտոցենոգների մեջ մենք հանդիպում ենք բավականին քանակությամբ օտար քսերսփիտային բույսերի: Այս փիտոցենոգների կազմը պետք է համարել ժամանակավոր: Կայսեն մարգագետնային փիտոցենոգներ առաջանալու համար հարկավոր կլինի ավելի երկարատև ժամանակ և համապատասխան հողի առաջացում:

Տարրեր կազմ ունեն առավելյա փիտոցենոգները, որոնց մեջ գերիշտում են ջրային և առավելյա բույսերը, ինչպես օրինակ *Batomis umbellatus*, *Acorellus pannonicus*, *Scirpus compactus*, *Heleocharis eupalustris*, *Puccinellia Sevangensis*, *Juncus lampocarpus*, *Thypha latifolia* և այլն:

Այդ բույսերը զբաղեցնում են տվյալ հողամասը 1—2 տարի, այնուահետեւ, ջրի եղբը հեռանալու հետևանքով, զբանք մենանում են, առաջացնելով հողի հումուս: Հողի հումուսային շերտը հասնում է մինչև 13 մմ հզորության (Զկալովկա):

Այդ ջրային բույսերը չորանալուց հետո, նույն հողամասում երեսն են գալիս այլ բույսեր, որոնք բնուրու են պարաբացված ավազան հողերի համար, օրինակ, *Sisymbrium Jrio*, *Papaver fugax*, *Pyrethrum punctatum*, *Artemisia Absinthium*, *Astrodaucus orientalis* և այլն:

Ուսումնակիրության ժամանակ մենք հայանարերել ենք հայտառանի համար մի քանի նոր տեսակներ ինչպիս, օրինակ, *Acorellus pannonicus*, *Centaurium pulchellum*, *Centaurium Meyeri*, *Cyperus Sp.*, *Centauria Sp.*, որը ցույց է տալիս տվյալ վայրի օրիզինալությունը ֆլորիստիկական տեսակետից:

Մարգաւնու շրջանում և այլ աեղերում (Զկալովկա, Նաբաշեն) ջրից ազատված տերիտորիաների ուսումնակիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ ազատված հողերում աճած փիտոցենոգների մեջ զիմավոր աեղը զբագլում է լեռնամարգագետնային բաւականությունը, որտեղ գերիշտում են զիմավորական լորագգիներն ու ցորենազդիները: Այնինչ Սկանի ու Ցամաքաբերդի և Լճաշենի ու Զկալովկայի միջև ընկած տարածություններում, որտեղ ուրբարաբ ներկայացնում է լեռնային ականակների բնիւրներ, խճաքաբեր ու ցեմենտացած քարեր, փիտոցենոգների մեջ դլամավոր աեղը զբագլում է լեռնատափառանային քարքարա վայրերի բուսականությունը, որտեղ գերիշտում են *Thymus Kotschyianus*, *Dianthus crinitus*, *Stipa capillata*, *Festuca ovina* և այլն:

Նկատի ունենալով, որ ջրից ազատված ապահությունները լեռնամարգագետնային ու լեռնաշատափաստանային ֆիտոցենոզների ազդեցության տակ ընական ձևավարքով համեմատարար զանգաղ են փոխակերպվում և հողագոյացման սկզբնական պրիմիտիվ պրոցեսների ձևավարքումը զանգաղ է կատարվում, պետք է նպատակահարմար համարել հիշյալ պրոցեսներին ակտիվ միջամակու եղանակով—այն է՝ ազատված ապահությունների մշակման ու պարարացման, զյուզատանական կուլտուրական բույսերի արմատավորման միջոցով արագացնել հողագոյացման պրոցեսները, սակայն ազդեցով կուլտուրական, բարձր արտադրողական հողեր:

Այս նպատակով կարելի է խորհուրդ տալ առափնյա փուխր ավագանողերը որոշ չափով օդապղութել հացահատիկային կուլտուրաների և հիմնականում կերարույսների մշակման համար, իսկ քարքարոտ հողերում, զրանց հատուկ նախապատրաստումից հետո, աճեցնել պտղատու ծառեր և տնկել անտառներ, որոնք խիստ անհրաժեշտ են Սևանի ներկայումս համարյա թե անտառագուրք ավագանում, որեակ մուտք գործող ուժեղ քամիները զգալիորեն իջեցնում են զյուզատանական կուլտուրաների ընթացավորմյունը:

Այսպիսով, երեք արգա ընթացքում ուսումնասիրերով Սևանս լճի ջրից ազատված հողերում տարածվող բուսականությունը, մենք տեսնում ենք, որ վերջինիս տարածումը և նրա դինամիզան կախված են բացի մյուս պայմաններից, նաև ափերի օրոգրաֆիական և զրունակությունների հողագոյացման պարմաններից: Սակայն վերջնական եղրակացության կարելի է հանդել միայն երկարատև ստացիոնար ուսումնասիրություններից հետո, այն ժամանակ, երբ առափնյա բուսականությունը հողի առաջացման հետեւ վանքով կկազմի բուսական խիտ ծածկությունը և բաց ֆիտոցենոզները կլերածվեն փակ ֆիտոցենոզների ու կուտանան որոշակի հատկանիշները:

ЛИТЕРАТУРА

1. Вильямс В. Р. 1938 г. Почвоведение. Москва.
2. Зедельмайер О. М. 1925 г. Очерк растительности озера Гилли. Тифлис.
3. Зедельмайер О. М. 1933 г. Бассейн озера Севан (Гокча), том III, вып. III, стр. 83—213, Ленинград.
4. Киреев И. А. 1932. Гидрографические работы на озере Севан, Ленинград.
5. Лятыш С. Я. 1932 г. Грунты озера Севан, Тифлис.
6. Кузнецов Н. И., Кара-Мурза Э. Н. и Зедельмайер О. М. 1931 г. Бассейн озера Севан (Гокча), том II, вып. 2, стр. 108—188, Ленинград.
7. Кузнецов Н. И., Шелковников А. Б. и Кара-Мурза Э. Н. 1929 г. Бассейн озера Севан (Гокча), 1 т., стр. 428—491, Ленинград.

Р. А. КАРАПЕΤЯН

О постепенных изменениях растительности на землях, освободившихся из-под воды при спуске уровня озера Севан

Р е з յ ո մ ե

При понижении уровня озера Севан освободится территория площадью в 118—120 тыс. гектаров. Эта территория должна быть хозяйствственно освоена. В связи с этим представляет интерес посте-

пенное зарастание этой территории растительностью. Изучение этого процесса представляет теоретический и практический интерес.

С этой целью нами и предприняты, с 1946 года, стационарные работы по изучению зарастания и смены растительного покрова на освободившейся из-под воды территории. На ее большей части грунт совершенно лишен глинистых частиц, и представлен песком различных фракций, галькой и обломочной породой, местами цементированной.

Изучение показало, что растительность на освободившейся территории представляет пеструю картину. В первые годы после освобождения из-под воды на бывших подводных грунтах развиваются влаголюбивые растения, которые по мере отступления воды постепенно сменяются менее влаголюбивыми.

Так, например, в Мартунинском районе и в некоторых частях Севанского района (Чкаловка—Норашен) обследованием освободившихся из-под воды территорий установлено, что в фитоценозах здесь главное место занимают горно-луговые растения, причем господствуют бобовые и злаковые.

На территориях же, расположенных между поселком Севан и сел. Цамакаберд, сел. Лчашен (Ордаклу) и сел. Чкаловка, где субстрат представляет собою обломки горных пород—галька, цементированные камни, в фитоценозах главное место занимают горно-степные растения, причем господствующими являются *Thymus Kotschyanus*, *Dianthus crinitus*, *Stipa capillata*, *Festuca ovina* и другие.

Учитывая сравнительно медленный естественный ход эволюции бывших подводных грунтов, под воздействием горно-луговых фитоценозов и формирования первичных примитивных процессов почвообразования, нужно считать целесообразным путем активного вмешательства в указанные процессы обработкой и удобрением подводных отложений и внедрением культурных с/х растений, ускорить почвообразовательный процесс, создавая культурные высокопроизводительные почвы.

Для вышеуказанного можно широко рекомендовать использование рыхлопесчаных прибрежных отложений под зерновые культуры и кормовые травы, а грунты из обломков пластической массы и их цементированных вариантов, после специальной их подготовки, отвести под плодовые насаждения и древесные лесокультуры. Последние крайне необходимы в Севанском, в настоящее время почти безлесном бассейне, открытом для сильных ветров, резко снижающих урожай культурных растений.

